ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 29 **N 137 -Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23–Ի N 79-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Հ.Ասլանյանի 2017 թվականի հունիսի 27-ի N 2/426 գրությունը՝ ***կարգադրում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի մարտի 23-ի <<Թալինի տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից 2017 թվականի ամառային զորակոչի 1990-1999թթ. ծնված քաղաքացիների բժշկական ստուգումը և զորակոչը անցկացնելու մասին>> N 79-Ա կարգադրության 8-րդ կետում և կարգադրությամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) <<Ա.Մուրադյան>> բառերը փոխարինել <<Հ.Ասլանյան>> բառերով:

Գ.ԳՅՈՋԱԼՅԱՆ